ՀՐԱՆՏ ԹԱՄՐԱԶՅԱՆ
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի հայ գրականության ամբիոնի վարիչ, ՀՀ Ազգային Ակադեմիայի ակադեմիկոս Հրանտ Սմբատի Թամրազյանի ծննդյան 70-ամյակը:

Դրերբ կես դար այս անունը հնչում է հայ մտավորականության շրջանում, Երևանի պետական համալսարանում, ուր դասախոսում է շուրջ տասնամյակից ավելի: Այդ անունը մաքուր ծանոթ է դպրոցական և ուսուցչական միջավայրում, որտեղ ուսանում են նրա «Հայ գրականություն» դասագրքով: Հրանտ Թամրազյանը հեղինակավոր դեմք է հայ գրողների ու գրաքննադատների միջավայրում՝ արդի գրականության շատ երևույթներին վերաբերող իր սուր և ինքնատիպ հոդվածներով, գրողների համագումարներում ու գրական բանավեճերում իր ծանրակշիռ ելույթներով: Որպես գիտնական, սիրված դասախոս ու Երկրի նկատագրով մտահոգ քաղաքացի նա ճանաչված է հասարակության տարբեր խավերի շրջանում, ընթերցող լայն զանգվածների մեջ:

Հրանտ Թամրազյանը ծնվել է 1926 թ. սեպտեմբերի 6-ին, Իջևանի շրջանի Աչաջուր գյուղում: Գրականության նկատմամբ իր մեջ հասունացող սերը և կյանքի հետագա բոլոր տարիներին գրականագիտությանը իր անմնացորդ նվիրումը Թամրազյանն ինքը բացատրում է մանկության տարիներին հայրենի գյուղի բնաշխարհից ու մարդկանցից ստացած տպավորություններով և ուսուցիչների հմայքով, որոնք իրեն մղել են իսկական գրական արժեքների ընթերցման, բորբոքել իր մեջ գրականության նկատմամբ բնատուր իր սերը: Այդ սերն էլ նրան, տասնամյակը ավարտելուց հետո, 1943-ին բերել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ, որտեղ գրականագիտական իր հակումների զարգացման պարարտ հող է գտել՝ ունենալով Հր. Աճառյանի, Գ. Ղափանցյանի ու հատկապես Ա. Տերտերյանի և Մ. Մկրտչյանի նման ուսուցիչներ: Ուսանողական տարիներին նրա դասակիցներն են եղել Սուրեն Աղաբաբյանը, Վահագն Դավթյանը, Պարույր Սևակը, Վազգեն Դևորգյանը, որոնց հետ ունեցած ամենօրյա հանդիպումներն ու զրույցները խոր հետք են թողել նրա գրական ըմբռնումների վրա:

1948—1951 թթ., համալսարանն ավարտելուց անմիջապես հետո, Թամրազյանը սովորում է ասպիրանտուրայում՝ գիտական ղեկավար ունենալով ակադեմիկոս Արսեն Տերտերյանին: Վերջինիս առաջարկով էլ նրա առաջին լուրջ գիտական հետազոտության առարկան դարձավ Ալ. Շիրվանզադեի գրական ժառանգությունը: 1954 թ. նա թեկնածուական դիսերտացիա է պաշտպանում «Շիրվանզադեի դրամատուրգիան», իսկ 1962-ին՝ դոկտորական դիսերտացիա՝ «Շիրվանզադեի կյանքը և գործը» թեմաներով, որոնք լույս են տեսնում առանձին գրքերով:

Դեռ ուսանողական շրջանից է Թամրազյանն սկսել իր աշխատանքային գործունեությունը՝ պաշտոնավորելով ռադիոյում, «Ավանգարդ» թերթի խմբագրությունում, հանրապետության պետական հրատարակչությունում: 1954 թ. նա ամբողջովին անցնում է դասախոսական աշխատանքի համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Այստեղ էլ նա շարունակում է աշխատանքն առ այսօր, նախ՝ որպես դասախոս, ապա՝ դոցենտ, իսկ 1963-ից՝ պրոֆեսոր:

1968 թ. պրոֆ. Հր. Թամրազյանը դառնում է համալսարանի խորհրդահայ գրականության նորաբաց ամբիոնի վարիչ, իսկ 1980 թ. ստանձնում է հայ դասական գրականության ամբիոնի ղեկավարությունը՝ այդ պաշտոնում էլ աշխատելով մինչև այսօր:

Կես դարից ավելի կապված լինելով Երևանի համալսարանի հետ, Հր. Թամրազյանը միշտ եղել է բանասիրական ֆակուլտետի առաջատար դեմքերից մեկը, որի օրինակին ու խոսքին

հետևել ու հետևում են սիրով ու հավատով: Նա իր գիտական-մանկավարժական վաստակով արժանիորեն նվաճել է իր տեղը համալսարանի բանասիրական կրթության պատմության մեջ, որպես իր ուսուցիչների՝ Արսեն Տերտերյանի և Մկրտիչ Մկրյանի արժանավոր հաջորդը: Իրոք, համալսարանի հայ դրականության ամբիոնի այս երեք դեկավարների անվան հետ է կապվում մեր ժողովրդի գրական-գեղարվեստական վիթխարի ժառանգության համակարգված բուհական ուսուցման ողջ ընթացքը, գիտական կադրերի պատրաստման գործը: Հր. Թամրազյանի դեկավարությամբ աճած շատ գրականագետներ այսօր աշխատում են ինչպես համալսարանում, այնպես էլ գիտության ու կրթության այլ օջախներում: Մեծ ջանք է նա թափել հայ գրականության բուհական ծրագրերի ստեղծման և խմբագրման ուղղությամբ:

Մանկավարժ Թամրազյանի հաջողությունը լսարանում պայմանավորվում է նրանով, որ նա բացառիկ սեր է տածում իսկական գրական արժեքների նկատմամբ, դրանց մասին միշտ խոսում է ոգեշնչված ու ջերմությամբ և այդ վերաբերմունքը ներշնչում է նաև լսարանին: Գեղարվեստական երկն ու գրական երևույթները նա վերլուծում է կյանքի ճշմարտության հետ ունեցած հարաբերության մեջ, բացում է ստեղծագործության կենսական երակները, ցույց տալիս հղացման ազդակները, մեր պատմության արձագանքն ու բաբախը նրա մեջ:

Բայց ոչ միայն այդ: Թամրազյանի խոսքը միշտ հենվում է գիտական խոր քննության վրա: Դասախոսն ու հետազոտողը նրա մեջ միասնական են. դասախոսություններից են ծնվել նրա հեղինակած շատ գիտական ուսումնասիրություններ ու դասագրքեր, իսկ դասախոսի հրմտությունը և ուսանողի հավատը նրա խոսքի նկատմամբ պայմանավորված է նաև գիտական վաստակով, հրապարակած գրքերով:

Ինչպես ասվեց, պրոֆ. Հր. Թամրազյանը հեղինակն է միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի «Հայ գրականություն» դասագրքի, որով տասնամյակներ շարունակ հայ դպրոցականները ուսումնասիրում են հայրենի գրականության ամենահարուստ շրջաններից մեկը՝ XIX դարի վերջն ու XX դարի սկիզբը:

Հր. Թամրազյանի աշխատանքը գրականագիտության բնագավառում եղել է շատ բեղմնավոր և բազմակողմանի: Նա հրատարակել է մի քանի տասնյակ մենագրություն, հոդվածների ժողովածուներ, պարբերական մամուլում տպագրել է հարյուրավոր մեծ ու փոքր նյութեր: Նրա գիտական վաստակը բնութագրվում է մի քանի ցայտուն հատկանիշներով:

Նախ, Հր. Թամրազյանի ընդգրկած նյութի շրջանակը շատ լայն է, և այս առումով նա առանձնանում է մեր մյուս գրականագետներից, որոնք սովորաբար զբաղասում են կենտրոնական գրականության պատմության որևէ շրջանի վրա: Թամրազյանի գիտական հետաքրքրությունները վերաբերում են մեր գրականության պատմության գրեթե ողջ ընթացքին: Հիշեցնենք նրա գիտական կենսագրության առավել կարևոր փաստերը:

Իր գործունեությունը Հր. Թամրազյանն սկսեց իբրև ակտիվ գրական քննադատ, մամուլում հանդես գալով ժամանակակից գրողների ստեղծագործությանը նվիրված սուր բանավիճական հոդվածներով, որոնք միշտ կրքեր էին բորբոքում, ձեավորում էին ընթերցող շրջանների ճաշակն ու վերաբերմունքը: Հատկապես հիշելի են նրա հոդվածները ժամանակակից պոեզիայի մասին 1953—54 թթ., նրա զեկուցումը Հայաստանի գրողների 3-րդ համագումարում, որոնց մեջ Հր. Թամրազյանը, մեզանում առաջիններից մեկը լինելով, անհաշտ պայքար հայտարարեց բանաստեղծական մտածողության և ոճի մեջ սխեմատիզմի, վերամբարձության, չապրված տրամադրությունների դեմ: Նրա այդ ելույթները խոր տպավորություն թողեցին, կարելի է ասել՝ համամիութենական արձագանք ունեցան: Հետագայում էլ նա բազմաթիվ էջեր է գրել ժամանակակից հայ բանաստեղծների և արձակագիրների, այդ թվում նաև սվյուռքահայ գրողների (Մուշեղ Իշխան, Հակոբ Կարապենց, Հակոբ Ասատուրյան և ուրիշներ) մասին: Սակայն ընդհանուր առմամբ նրա գիտական հետաքրքրությունների ծանրության կենտրոնը որոշակիորեն տեղափոխվում է դեպի դասական գրականության հետ կապված խնդիրները:

Այսպես, Շիրվանզադեին նվիրված հիմնարար ուսումնասիրությունից (1961) հետո, որը տալիս է մեծ գրողի ստեղծագործության համակողմանի քննությունը, Հր. Թամրազյանն իր ջանքերը կենտրոնացնում է XX դարի սկզբի և խորհրդային առաջին երկու տասնամյակների (20—30-ական թթ.) գրականության վրա: Արդյունքը եղան 30-ական թթ. հայ գրական ընթացքի քննական տեսությունը՝ զետեղված «Հայ սովետական գրականության պատմություն» կոլեկտիվ աշխատության առաջին հատորում (1961), բազմաթիվ գրական դիմանկարներ, մեծ ու փոքր ուսումնասիրություններ արևմտահայ ու արևելահայ գրողների մասին: Նա հատկապես խոր քննության է ենթարկել դարասկզբի արևմտահայ բանաստեղծության օրինաչափություն-

ներն ու ճակատագիրը, ստեղծել է Սիամանթոյին նվիրված առաջին մենագրությունը (1964), նոր դարաշրջանի մեծագույն դեմքի՝ Եղիշե Չարենցի ստեղծագործության բազմազան խնդիրներ արծարծող գիրքը (1981): Նույն շրջանում էլ Հր. Թամրազյանն ամբողջացրեց խորհրդահայ գրողներին նվիրված իր բազմաբիվ ուսումնասիրությունները և լույս ընծայեց «Սովետահայ գրականության պատմություն» բուհական ծավալուն դասագիրքը: Շարունակելով իր երկարամյա աշխատանքը ազգային գեղարվեստական գիտակցության պատմության ասպարեզում, նա լույս է ընծայում «Հայ քննադատություն» մեծածավալ աշխատության առաջին (1983) և Երկրորդ (1985) հատորները, ավելի ուշ՝ 1992-ին Երրորդ հատորը, ինչպես նաև մենագրություններ Դ. Դեմիրճյանի, Վահան Տերյանի և ուրիշ գրողների մասին: 1995-ին նա ընթերցողի սեղանին է դնում «Հովհաննես Թումանյան. Բանաստեղծը և մտածողը» մենագրությունը՝ երկար տարիների ընթացքում մտածած ու բծախնդրորեն մշակած գիրքը՝ մի նոր խոսք թումանյանագիտության մեջ:

Թամրազյանը դիտարկման ու քննության նյութ է դարձնում հայ գրականության գրեթե բոլոր շրջանների հեղինակներին, Խորենացուց մինչև ժամանակակից գրողներ՝ արևելահայ ու արևմտահայ: Նա հետազոտության նյութ է դարձրել բանաստեղծությունը, արձակը, դրամատուրգիան ու քննադատությունը: Ժամանակային լայն ընդգրկումը խարսխվում է գրականության պատմության հանգուցային հարցերի խոր ըմբռնման վրա: Թամրազյանի գիտական վաստակի մեջ առանձնահատուկ տեղ ունեն դարաշրջան, ազգային մտածողություն ու համամարդկային ձգտումներ խորհրդանշող հեղինակները՝ Մովսես Խորենացի, Գրիգոր Նարեկացի, Հովհաննես Թումանյան, Եղիշե Չարենց: Սրանք մեր մշակույթին ազգային դիմագիծ տվող անուններ են, որոնց կյանքի և գործի քննությամբ Թամրազյանը լույս է գցում նրանց հաջորդների գործունեության վրա ևս: Դրականագետը կապ է ստեղծում ժամանակների միջև, մի արժեքը հշտում մյուսով, աչքի առաջ ունենալով գրականության ողջ տեսադաշտը՝ բավանցում է օրինաչափությունների մեջ, հայտնաբերում գրական զարգացման զուգահեռ երևույթներ:

Գիտնականի վաստակը ծանրակշիռ է գրականագիտության հատկապես երկու բնագավառում՝ գրականության և քննադատական մտքի պատմության: Կարելի է ասել, որ այս վերջին բնագավառում՝ հայ քննադատության պատմության մեջ, նա սկիզբ է դրել գիտության մի նյուղի, որը մինչև վերջերս կարծես ինքնուրույնված ու ձևավորված չէր, բայց Թամրազյանի և նրա հետևորդների շնորհիվ հստակվեց ու բաղմացիություն ստացավ: Այս առումով «Հայ քննադատության» երեք հատորները, ինչպես նաև գիտնականի ղեկավարությամբ ստեղծված մյուս աշխատանքները միասին վերցրած մի ծանրակշիռ ներդրում են հայ մշակույթի պատմության ուսումնասիրության մեջ: Հիշենք նաև Թամրազյանի գիտական-կազմակերպական աշխատանքի մեկ այլ վաստ: Խորհրդահայ գրականության ամբիոնի վարիչ եղած տարիներին նա սկիզբ դրեց Եղիշե Չարենցի կյանքին և գործին նվիրված ամենամյա գիտաժողովներին՝ ներգրավելով հանրապետության լավագույն գրականագետներին: Արդյունքը եղան «Չարենցյան ընթերցումներ» պարբերական հրատարակության հինգ գրքերը:

Թամրազյանի գիտական վաստակը, մանկավարժական գործունեությունը ժամանակին տարբեր առիթներով գնահատվել է ըստ արժանվույն: Նրա «Երիտասարդ Չարենցը» գիրքն արժանացել է Հայաստանի Գրողների միության մրցանակին, Գրողների միության Միքայել Նալբանդյանի անվան մրցանակին է արժանացել «Հայ քննադատություն» ուսումնասիրությունը, իսկ «Հայ գրականություն» դասագրքի համար նրան շնորհվել է Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ: 1986 թ. նա ընտրվել է Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1996-ին՝ ակադեմիկոս:

Դեռ 1970 թ. նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում, իսկ 1987 թ. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից պարգևատրվել է «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով:

Հրանտ Թամրազյանը որոնող միտք ունի և մշտապես հայտնաբերում է հետաքրքրությունների նոր ոլորտ: Բեղուն ու վաստակաշատ գիտնականը այսօր էլ աշխատում է երիտասարդական եռանդով: Նրան երբեք չի լքում լավատեսությունը: Նա այն մարդկանցից է, որ հավատարիմ է իր կոչմանը, անում է իր գործը՝ չսպասելով ավելի լավ ժամանակների:

Մաղթենք նրան բաջառողջություն, եռանդ ու կորով, ստեղծագործական աշխատանքի ավյուն և ակնկալենք նոր գրքեր:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Մ. ՋՐԲԱՇՅԱՆ

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Ա. ԴԱԲՐԻԵԼՅԱՆ